

4934



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«29» 04 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 053 - 24

Ձեռնարկողը՝

«Երևաննախագիծ» ՓԲԸ  
ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3

Գործունեությունը՝

Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2 հասցեում  
Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցի  
կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայր  
ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 053 - 24

«29» ապրիլ 2024թ.

**Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/2 հասցեում Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝ «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ  
Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

**Ներածական մաս.** Գործունեության նպատակն է կառուցել Ալբերտ Ազարյանի անվան ժամանակակից բազմաֆունկցիոնալ մարզադպրոց:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի «ա» ենթակետի՝ «քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կառույցներ», դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Գործունեության տարածքը գտնվում է Կենտրոն վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2 հասցեում՝ Ծիծեռնակաբերդի խճուղու սկզբնամասում, Ծիծեռնակաբերդի խճուղու և Աթենքի փողոցների հատման հատվածից մոտ 300.0 մետր հյուսիս-արևելք, «ԴԱԼՄԱ» առևտրի կենտրոնի հարավային կողմում՝ նրանից մոտ 600.0 մ հեռավորության վրա:

Հողատարածքն ազատ է կառուցապատումից, հիմնականում հարթ, անմշակ, սակավ բուսականությամբ և բուսահողի բացակայությամբ է:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում: Տեղամասը հարթեցված է, մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 998.0-999.0 մետրի սահմաններում:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար, վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթները բացակայում են, ստորգետնյա ջրերը տեղամասում գտնվում են 30.0 մետրից խորը:

Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Ելնելով ռելիեֆից՝ մարզադպրոցը նախագծվել է վեց մասից: Շենքի տակ՝ նկուղային հարկում կլինեն 88 մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղի, տեխնիկական տարածք, ինչպես նաև մարզասրահ, գույքի պահեստներ և արհեստանոց: Գլխավոր





ճակատի երկհարկանի հատվածում կլինեն կենցաղային (հանդերձարաններ, սանհանգույց), վարչական և սպասարկման տարածքներ, հետևի ձախ մասում մարզասրահ, հետևի միջին մասում՝ ունիվերսալ մարզադահլիճ, ինչը կունենա հանդիսատեսի համար նախատեսված տրիբունա՝ մինչև 532 նստատեղով: Հետևի աջ մասում՝ նախատեսվում է գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի սրահ: Հաշվի են առնվել նաև մարզադպրոցում սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց (նաև երեխաների և դեռահասների) համար մարզահամալիրի հասանելիությունն ապահովելու առանձնահատկությունները, ներառյալ սանհանգույցներում:

Տանիքները նախատեսվում են երկթեք՝ փոքր թեքությամբ, կրող կառուցվածքները՝ մետաղական, ջրահեռացումը՝ կազմակերպված: Նախատեսված են ելքեր դեպի տանիք աստճանավանդակների և մետաղական ելարանների միջոցով:

Աստիճանավանդակների դռները նախատեսվում են հակահրդեհային և ինքնափակվող, բոլոր աստիճանավանդակները կունենան բնական լուսավորություն:

Մարզադպրոցը ապահովված կլինի ջեռուցման և օդափոխության կենտրոնացված համակարգով: Մարզադահլիճների ջեռուցումը կիրականացվի ճառագայթային պանելների միջոցով: Կընտրվի օդափոխության արհեստական համակարգ, դահլիճի օդափոխությունը կիրականացվի ներածման-արտածման սարքի միջոցով, որը կտեղադրվի տանիքի վրա: Շենքում կլինի հովացման համակարգ, նախատեսված է նաև օդի ներածում ավտոկայանատեղի:

Սառը ջրի սնուցումը նախատեսվում է իրականացնել տարածքի դիմացով անցնող ջրագծից, տաք ջրամատակարարումը՝ կառույցի տանիքում նախատեսվող անհատական կաթսայատնից: Նախատեսված են համակցված խմելու տնտեսական և հակահրդեհային ջրամատակարարման ցանցեր: - 4.50 նիշում ավտոհանգրվանի համար նախատեսված է հրդեհաշիջման ցանց՝ ջրի պաշարի համար 75 մ<sup>3</sup> բակ՝ իր պոմպակայանով:

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս կհավաքվի և կհեռացվի ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց, որը կմիանա Աթենքի փողոցով անցնող կոյուղատարին:

Մարզադպրոցի էլեկտրամատակարարումը կիրականացվի 110/6 կՎ «Ծիծեռնակաբերդ» ենթակայանից՝ նկուղային հարկում ենթակայանի տեղադրմամբ:

Մարզադպրոցի ստորգետնյա հարկը՝ նախատեսված ավտոկայանատեղիների համար անհրաժեշտության դեպքում կծառայի նաև որպես պարզագույն թաքստոց:

Մարզադպրոցի կառուցման հիմնական տեխնիկակա-տնտեսական ցուցանիշներն են՝

հողամասի մակերեսը՝ 15509.0 քմ,  
կառուցապատման մակերեսը՝ 5790.3 քմ, /37.3%/,  
կանաչապատման մակերեսը՝ 4187.2 քմ, /27%/,  
անջրանցիկ մակերեսը՝ 5531.5 քմ, /35.7%/:

Նախագծով ապահովված է լուծում՝ հրշեջ մեքենայի մուտքը դեպի տարածք և հասանելիություն շենքի յուրաքանչյուր հատված:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվի հողային աշխատանքներ, որի արդյունքում հանույթը կկազմի 62270 մ<sup>3</sup>, իսկ հետլիցք՝ 11000 մ<sup>3</sup>: Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:

Նախատեսվում է տարածքի ընդհանուր բարեկարգում՝ կլինեն ճեմուղիներ և կանաչապատ հատվածներ, կտեղադրվեն նստարաններ, աղբամաններ և լուսատուներ: Կանաչապատումը կիրականացվի տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դեմդրոնախագիծ:





Նախատեսված է ոռոգման կազմակերպված ցանց: Ոռոգումը կիրականացվի ցնցուղային եղանակով, կամ ռետինե խողովակներով՝ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգման ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով, պայմանագրային հիմունքներով: Կանաչապատման աշխատանքներն իրականացնելու համար նախատեսվում է ձեռք բերել 1300 մ<sup>3</sup> հողաբուսաշերտ, ինչի ձեռք բերման վայրը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Նախատեսվող գործունեությունն իրենից կներկայացնի ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն՝ ներդաշնակ շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանա վիզուալ տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Վերը նշված աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն արտանետումների հետ, որոնք են՝

- փոշու արտանետումներ՝ հիմքերի փորման ընթացքում,
- դիզելային վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Նախնական գնահատման հայտի համաձայն՝ նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Օդային ավազանն աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման/ ընթացքում շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորման իրականացում,
- շինարարական նյութերի տեղափոխում (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- ջրցանի ծավալների հաշվարկում այնպես, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերի միավորում մեկ բակային ցանցում և միացում սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի





տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադրև և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսված են՝

- շինարարական նյութերի տեղադրում հատուկ նախատեսված հարթակի վրա,
- այդ տարածքներում շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով՝ սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում,
- շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար ավագի կամ մանրախիճի տեղադրում: Մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքերում փոված ավագի կամ մանրախիճի տեղափոխում համապատասխան աղբավայր և այն փոխարինում նորով և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանան հետևյալ թափոնների տեսակները՝ շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի): Թափոնատեսակների վտանգավորության դասի, ծածկագրերի, քանակի վերաբերյալ տեղակատվությունը տրված է հայտի համապատասխան բաժիններում:

Մարզադպրոցի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնցից են՝ թափոնների հավաքման վայրերի և հեռացման ուղիների նախապես որոշված լինել շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար, շինարարական աղբի հավաքում և հեռացում արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից, վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգեր, վտանգավոր արտահոսքերի դեպքում կլանիչ նյութով առաջացած հետքերի անմիջապես մաքրում և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, աշխատողների վնասվածքներ, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն, որոնց հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հայտի համապատասխան բաժիններում: Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական տրանսպորտի տեղաշարժի աշխատանքների կազմակերպում ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակում շահագործման ապահովում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում, կարգավորում և այլն, որոնք նկարագրված են հայտի համապատասխան բաժիններում:

Մարզադպրոցի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանի իրականացում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,





4. Աղմուկի, թրթռումների և տատանումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 875 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** նախնական գնահատման և փորձաքննական գործընթացներում օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ, կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Մարզադպրոցի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային շենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. Անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:
4. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
5. Ապահովել տարածքի կանաչապատումը՝ իրականացնելով ծառատնկման աշխատանքներ: Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի համաձայն:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ



մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի հ. 2/2 հասցեում Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
գլխավոր մասնագետ՝



Նելլի Նապիրյան